

Թիւնները պաշտպանելու համար քան թէ արդիւնքը համար գոյութիւն ունի Միջոցներ հետեւեալ խաւով

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐՆԵՐ

Լոնտոն 20 հոկտ. Տէյլի Թէլէկրաֆ լրագրին հրատարակած այն լուրը թէ Ռուսը կատարել կուէ մը յետոյ Մէյքլ մասած են, Լոնտոնայի մէջ մեծ յուզում պատճառեց, որովհետեւ Անգլիական մամուլը միշտ յայտարարած է թէ Մէյքլ և Հէրաթ Հընդ-կատտանի բանակներն են:

Լոնտոն 21 հոկտ. Ռուսական զօրաց Մէյքլը գրաւած լինելուն նկատմամբ Տէյլի Թէլէկրաֆի երէկ հրատարակած լուրն հաստատող որ և է հետագիւր մը չեկաւ Անգլիական կառավարութեան, և ամեն ինչ կարծել կուտայ թէ Ռուսը նուազ կարեւորութիւն ունեցող ուրիշ կէտ մը գրաւած են:

Լոնտոն 21 հոկտ. Ետագույ խոսքի որդւոյն նկատմամբ ինչպէս նաև Անգլիոյ կողմանէ Աֆղանստանայ կառավարութեան մասին Տէյլի Նիւզի երէկ հրատարակած լուրերն ուրիշ որ և է լրագրի չհաստատուել, և խիստ տարակուսելի կը թուին:

Պէրսի 21 հոկտ. Կը հաւատան թէ Ռուսիոյ կողմանէ տրուած հաւատարմաց վրայ, Ռուսիոյ և Գերմանիոյ միջև յարաբերութիւնը բարելոցած են:

Այս բոլորը հետեւեալ խաւով

Լոնտոն 21 հոկտ. Վաղը նախարարաց արտաքին կարգի խորհուրդը մը տեղի պիտի ունենայ:

Թալմը Լրագրի Սիմլայէն եկած հեռագիր մը կը հրատարակէ, ծանուցանող թէ Թէքէի Թիւրքմէնը կատարելապէս յաղթել և յետոյ միւր են զԽուսական բանակն, որ դէպի Կասպից ծով ետ քաշուելու պարտաւորուել է՝ ձմեռն անցուցնելու համար տեղ մ'ընտրելու նպատակաւ:

Սիմլա 21 հոկտ. Ռուսաց կողմանէ Մէյքլի գրաւման զեւրոյցը սուտ է: Տէյլի Թէլէկրաֆի այս լուրը վաւերական աղբիւրէ սուտ կը հանուի:

Լոնտոն 21 հոկտ.

Երեւ. Բոնո.	41 3/16
Փոյս.	4865 4 1/2
"	1869 13 5/8
"	1871 53 3/4
"	1872 21
"	1873 42 3/8
Երկրորդ.	73 5/8
Անգլ. Բոնո.	97 11/16

Փարիզ 21 հոկտ.

Երեւ. Բոնո.	41.50
Պարիզ. Բոնո.	81.75
"	85.25
"	80/0
"	117.55

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Բարձր. Սաֆիէթ Իսաչան, որ պաշտօնաւորանայ տուայի պաշտօնէն հրաժարական տուած էր, վերջ. Սուլթանին հրաւերին վրայ այսօր Կայսերական պալատը պիտի երթայ, և կը կարծուի թէ հրաժարականը չը պիտի ընդունուի: Իսկ Թուրք-Հելլենական յանձնախմբին նախագահի պաշտօնին մէջ վերահաստատուելով՝ հաւանեցաւ շարունակել: Եանձնախմբին եօթներորդ. նիստը վաղը կամ ուրբաթ օրը պիտի գումարի:

Էվգաֆի նախարար Սուպհի Իսաչան նախագահ անուանեցաւ եկաւ միտից յանձնախմբին, որ ինչպէս յայտնի է՝ նախարարական փոփոխութիւնէն առաջ Գատական նախարար Սայիտ Իսաչանի նախագահութեան ներքե կը գտնուէր:

Արեւելեան Բուլղարի Եւրոպական յանձնախմբին Գաղղիական առաջին պատերազմի Պ. Տր Ռինկի Պուլիտիկա և Մակեդոնիա պարտելէ յետոյ երկուշաբթի օրը մայրաքաղաքս եկաւ:

Բէյթալի մէջ ի պատիւ վերջ. Սուլթանին անցեալները կատարուած կըրօնական հանդիսին համար Ն. վերահաստատութիւնն հեռագրաւ շնորհակալութիւն յայտնել տուաւ:

Փիլիպպի Համանուն լրագիրն և մայրաքաղաքիս Թուրք լրագիրը մը կը ծանուցանէ թէ Բ. Գուռն Արեւելեան Բուլղարի ընդհանուր կառավարել Ալէքս. փաշային Կ. Պոլիս գալու հրաման զրկել է:

Կարինէն կը գրեն թէ տեղւոյն զինուորական հրամանատար Միւնիք փաշայի նախագահութեան ներքե յանձնախմբին մը կազմուած է, որ շարքին երեք օր նիստ ընելով նորոտիկանութեան կազմութեան գործովը կը զբաղուի:

Պետական խորհուրդն որոշեց, որ դադարեցնու ընտրած տուներու տէրերն ամեն տուրքէ զերծ պիտի լինին այն դադարեցնու ընտրած բոլոր ժամանակին համար, և երբ իրենց տուները վերանորոգել ուզեն, թէգըքէի տուրք չպիտի վճարեն:

Նախորդ. Խոսիլ Խանիլ փաշային հօրեղոր օրդի Հալիմ փաշան որ ժամանակէ մ'ի վեր մայրաքաղաքս կը բնակէր, իւր երկու որդւոյ հետ այսօր Եւրոպա կ'ուղևորի, և կ'ըսուի թէ Նաբօլի մէջ նախորդ. Խըտիլին այցելութիւն ալ պիտի տայ:

Կ. Պոլիս բերուած Բէթրօլին (կազմ. պահպանութեան յատկացեալ միւր ընտրող վտանգէ զերծ չլինելուն պատճառաւ, վերջ. Սուլթանին հրամանաւ արքունի նաւարանէն չուղենաւ մը պիտի յատկանայ իւրեւ միւրեանոց ծառայելու, և երկու հարիւր յիսուն հազար անուակ բէթրօլ պիտի կրնայ պարունակել:

Անգլիական վերջին լրագրաց մէջ կը կարդամք թէ լրտ Գալիսարօն յանկարծ յօգաջուէ բռնուելով ծանրապէս հիւանդացել է:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԷՍԶԱՄԸ ՈՒՄՈՒՄԻԷ	
Երէկ իրիկուն գոցուեցաւ	42.14
Այս առաւօտ բացուեցաւ	42.12
Կէս օրին	42.42
Բուլղարի երկաթուղի	Քր. 44 50
Քր. 745	իր. 745

ԸՆԹԱՅԻՆ ԿՐԱՄԱՅ

10 Հոկտեմբեր

Անգլ. Իր.	409 22
Նարոյն օսի	87 8
Իմպերիալ Ռուս	89 38
Գրքերից	51 40
Բէյթալի տարեկանութիւն	6 18
Հինգնոց	47 40
Մէթալիք	47 40
Պղինձ	435

Ա. Գ. Ս. Յ. Ի. Ն.

Ս. Պատրիարքն երէկ Ղալաթի տուրք համար կազմուած յանձնախմբին նախագահեց:

Կիրակի գիշեր Հակահասունեան Կաթօլիկ ազգային Բերա Սաղաթ—Աղաճը փողոցը գտնուած Միսիթարեանց վարժարանը բռնութեամբ գրաւելու փորձ փորձեցին, բայց չյաջողեցան:

Ահաւասիկ պատմութիւնը. Մանուէլ վարդապետ Գալուսի, Միսիթարեան—Հասունեան, որ Գաղղիական պարտանի մեծաւորութիւնն ստանձնած էր նոյն վարժարանին տեսուչ Հ. Վարդան Շիշմանեան վարդապետին հետ դաշնագիր մը ստորագրելով, կիրակի առաւօտուն մամուլը նամակներով կը ծանուցանէ յիշեալ Հ. Վարդան և Հ. Յակոբ Արճեան վարդապետներուն, որ եթէ Հասունեան կուսակցութեան չյարին, այսուհետեւ վարժարան չպիտի ընդունուին: Ասոր վրայ յիշեալ երկու վարդապետք խորհրդով և առաջնորդութեամբ Լինֆիէճեան Հ. Գրիգոր վարդապետի, նոյն գիշերը կ'որոշեն Սաղաթ—Աղաճի փողոցը գտնուած Միսիթարեան վարժարանը գրաւել:

Ըստ այս որոշման Հակահասունեանէն 30-40 հոգի հաւաքուելով և Ալեքսանդրեան Հեղինէ վարդապետին գլխիւն վարժարանին դռնէն ներս մտնելով առիթ առնելով անոր ետեւէն ներս կը մտնեն, և մէջը գտնուած դռնապաններն ալ դուրս հանելով վարժարանին տէր կը լինին: Սակայն Գալաթեան Հ. Սամուէլ վարդապետ ուրիշ քանի մը Հասունեան ընկերներով կը հասնի, և ոստիկանութեան լուր կը զրկել: Իսկոյն ոստիկանութեան նախարարն անձամբ կը հասնի, և ներսը գտնուողները դուրս ելնելու կը պարտաւորէ խոստանալով յաջորդ օրը խնդիրը քննել, և վարժարանին դռան պահպանութիւնը իւր պաշտօնէից կը յանձնէ:

Երկուշաբթի օրն երկու կողմէ անձինք ոստիկանութեան նախարարին ներկայացան. նա ալ որոշեց որ Հ. Վարդան և Հ. Յակոբ վարդապետք Գաղղիական վարժարանը վերադառնան, և Բերայի վարժարանն ալ Հասունեան—Միսիթարեանց ձեռքը մնայ, որովհետեւ տէրութիւնն որոշած է ամեն բան իր գտնուած վիճակին մէջ պահել:

Հ. Վարդան և Հ. Յակոբ նոյն օրն ոստիկանութեան նախարարին ընկերակցութեամբ Գաղղիական վարժարանը գնացին և իրենց սենեակները նստան: Հ. Մանուէլ Գեր. Հասունի նամակները ներկայացոյց, բայց ոստիկանութեան նախարարն ակամջ չկախեց:

Գործերն այս վիճակին մէջ են այժմ, և չգիտեմք թէ տակաւին ինչ պիտի լինի: Այս անգամ կուրսն ոչ միայն Հասունեան և Հակահասունեանն են, այլ նաև Միսիթարեանց մէջ է, որք նոյնպէս Հասունեանի և Հակահասունեանի բաժնուած են:

Վանէն Սեպտ. 8 թուով գրուած նամակի մը հետեւեալ միտիթարական լուրը կուտայ մեզ.

«Այս շաբթու երեք այցելուներ հասաւ ի վան, որոց մին է Մանուիլեան Պ. Սեդրակ, որ իր գրաւոր աշխատութեամբ ծանօթ է շատերուն, երկրորդը Արարատեան անձնուէր ընկերութեան անդամներէն Պ. Պետրոս Վասիլեան, որ վարժապետանոցին և դիւղական դպրոցաց այցելութեան եղած է, երրորդն է Պ. Նշան Մատթեոսեան երկրագործ, թէ՛ Պ. Մանուիլեան և թէ՛ այս վերջինը՝ Տիմիտիէ զրկուած են այս կողմեր մանկավարժական և մի ևս երկրագործական դպրոց բանալու: Վանե»

ցին մեծ համակրութեամբ ընդունեց այս Պարսններ, Գալաթի թէ երկուքին ալ կարօտ է և թէ ուսման հետ ալ տք է նաև հայ վաստըրելու և երկիր մշակելու կերպն ուսուցանել այս փոքրիկներն, որուն մէջ խաղաւ տգէտ է, ոչ միայն վանեցին՝ այլ և ամբողջ Ասիոյ Տաճկաստան: Այս համակրանաց ի նշան ձեռնարկեցաւ հանդանակութիւն մի բանալ փողովաբոյն մէջ յանուն այն երկրագործական դպրոցին՝ որ ազգայնաց նպատակաւ վանայ շքը շակայներն յարմարագոյն տեղի մի վրայ պիտի բացուի յիշեալ երկրագործին ձեռքը: Այս ձեռնարկութեան մէջ տաճնորդ և յորդոր հանդիսացան իրենց նպատակը:

Պ. Կ. Կոմսարական փոխ հիւպատոս Ռուսիոյ 100 լիւրա երեւիա սըրբազան 20 լիւրա Աղաթոնեան Միլլատիէ Էֆէնտի 30 Արիկ Էֆէնտի նախագահ եղևնադատ տտենին 40 լիւրա Կարապետ Էֆէնտի նախագահ տեւորական Ժողովին 20 լիւրա Գէորդ Էֆ. Գալճեան 30 լիւրա:

Սոյն հանդանակութիւնը պիտի շարունակի մասնաժողովի մի ձեռքը, յոյս կայ թէ քիչ օրէն բաւական դուրս մի պիտի դուրսնայ յիշեալ դպրոցին ի նպատակ Տարակոյս չունինք թէ մեր հեռաբնակ հայրենակիցներ և ազգասէր անձինք պիտի օգնեն այս գործին որ մեծ և նշանաւոր պիտի լինի ոչ միայն վանեցւոյն՝ այլ և Հայաստանի ամեն գաւառներուն համար:

Տիմիտի Մեղու Հայաստանի լրագրին մէջ հետեւեալ կը կարդամք.

—Դարաւաղեալ Մալիշայի դիւղում այժմ բնակվում է ոմն Յարութիւն, որ 45 տարի առաջ խաչագողութեան գնալով Ռուսաստանում բռնուել է, և որովհետեւ տաճկական անցավորութիւն ունեցել, վասնորոյ իբրեւ տաճկահայտակ նորան յանձնել են տաճկական սահմանապահ իշխանութեանը: Յարութիւնը Տաճկաստանից դերի է ընկնում Պարսկաստան և այստեղ ոչ միայն հաւատարմութեամբ է, այսինքն ընդունում է մահմետականութիւն, այլ և աւարական դպրութիւն սովորելով դառնում Մոլլայ և անուր զնում է Մոլլայ Սատըք: Յարութիւն Մոլլայ Սատըքը մի քանի ժամանակ բնակվում է սահմանակից Մակուի խաչագողութեան մէջ, և երբ կիներ մեռնում է, անցնում է Ռուսաց սահմանը և բնակվում է Շարուրի տաճիկ փոստիան դիւղում, ուր և շարունակում է իւր Մոլլայութիւնը: Ինքը Դարաւաղեալ Մալիշայի դիւղից լինելով լուծ է որ իւր նախկին կինը արդէն մարդու է գնացել, և իւր ծագումը պահելով՝ նոր տաճիկ կին է ուղւում, երեսայր տնեւում և յանկարծ անցեալ 1878 թուի հոկտեմբերին ոչ միայն յայտնում է իւր քոյրերին և այլ ազգականներին իւր ով լինելը, այլ և ցանկանում է հայ միւսեւ իւր երեսայրը: Արդեադու սուրբ խոյ վանքում, նորտ տնին, բողոքութիւն հանդիսականներին առաջ նորա փոքրիկ երկու աղջկունքը հայ միւսուելով կոչուեցան Շուշանիկ և Սաթիլի (բախտաւոր): Իսկ նոյա մայրը երկար ժամանակ մնաց Տաճիկ և բնակվում էր Մոլլա Յարութիւնի հետ: Կինը տնեւելով իւր անեղ վիճակը և քրիստոնեայ երեխայոց և մարդուն ցանկանում է նոյնպէս հայ միւսուել: Նախկին անի յաջորդ ուղարկում է այդ աղքատ ողորմելուն Նիմիտի Սիւսիլը...:

ԹՂԹԱԿՑՈՒԹՅՈՒՆԻ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՅ

Ազնիւ Մասիս :

Քրդական ազատամարտը թիւնն այս միջոցին ուժով կը դուրսէ . ամեն ուրեք մանաւանդ . ի վառարարական , Հէնրի Մարթինով զինեալ թիւրք հրուսակներ կը վառան , և Հայոց գիւղօրէքը կ'աւարեն ու կ'աւերեն : Պաշտպան Նէհրիա շէյխը , կեանքի շէյխ իսպառուլահը , Ապաղայի Մուսա պէյը բացարձակաբար կը դուրսեն : Գեռ չորրորդ զորաբանակի Միւշեր Մամիշ փաշան չէ յաջողած զայնք , և վանէն Կարնոյ վայրէն զինուոր կը խնդրէ : Կը կարծուի , որ վայրն Կարնոյ բնակիչները ի զէն կոչելով փութացնէ ի վան : Մինչ այս այսպէս , Կարնոյ շրջակայից խաղաղութեան համար զինուորական բուռն միջոցներ ևս պէտք են , ուստի վայրն անդադար կը հետադրէ Բ. Դրան , որ ժամտարմայի գընդապետը (իսկէնաէր պէյ) փութացնէ , որ դառնալ նոր ժամտարմայութիւնն և տեղական զինուորութիւնը հաստատելով՝ կարելի լինի երկրորդ անգործութեան մէջ պահելու : Այնուպէս վայրն տագնապեցաւ երբ լսեց որ Երեւանի և վանայ Բուսուկան թղթատարին վրայ յարձակում եղեր է սեպտ. 14ին : Ապստամբ Մուսա պէյի մարդիկ յանկարծ թըղթատարին վրայ յարձակելով՝ կը զարնուին , ստակալի կուէէ մը յետոյ , յորում և Սարի ուղեկից մը ևս կըսպանուի : Թղթատարը անձնատուր կը լինի . . . : վանայ և Կարնոյ Բուսուկան հիւպատոսները կ'առաջարկութեան թախանձանայ վրայ հաղիւ հանգարտեցան : Կարծես մեր Բիւրգերը քիչ էին , Պարսկաստանի Բըրգերն ևս մերոնց հետ միանալով կ'ապստակեն անդադար : Բիւրգերու շահատակութեանց համառօտ մէկ ցանկն է հետեւեալը , որոյ Գաղղիեան թարգմանութիւնն Անդղիոյ ընդհանուր հիւպատոսին տրուած և բնագիրը վանէն ի Պատրիարքարան յղուած է :

Սեպտ. 2ին Պաշտպան Մաշկա վա գիւղին վրայ Միւշեր աղայի 200 զինեալ Բիւրգերը կը յարձակին , 1250 ոչխար կը տանին , սուներ կուղարկելով և գիւղին պահստորը ըսպաննելով : Այս միջոցին Յարութիւն Պարսկանի երկու տղեկներն առ ահի կը մեռանին և կիներ կը վիժեն : Սեպտ. 4ին , 8է յիւրմէն գիւղին վրայ Բիւրգեր կը յարձակին և ամբողջ գուարը կը տանին :

Սեպտ. 5ին , Արտամեոյի Սահա կը Ատիւանան գիւղը գնացած առտեն վանայ Միւշեր տղայէն առտընանակաւ կ'ապաննուի , որ և այսօր իւր այս սփիւրջ երբ 18 ամեայ Բիւրգ աղկան մը վրայ կը ձգէ . . . :

Սեպտ. 10ին թէմուր աղայի 20 ձիււոր և 10 հետեակ Բիւրգերը կրկին անդամ Ոսկերակ գիւղի վրայ յարձակելով 1700 ոչխար և 300 կով ու եղ կը տանին . . . :

Սեպտ. 11ին Բիւրգերը Ալտաշ գիւղի վրայ յարձակելով ամբողջ գուարը կը տանին . . . :

Սեպտ. 13ին Սիւրբ-Էփրատ կաններ վանայ փաշա աղայի ըսուած տեղը (քաղաքէն մէկ ժամ հեռի) յարձակում կը կրեն Բիւրգերէն : Վաճառականներէն մէկը կըսպանուի , երկուքը կը վերաւորուին , որոց բժշկութեանը յոյս չկայ . . . :

Սեպտ. 14ին Գանեալ գիւղի եւ կեղեցին Բիւրգերէն կը կողոպտուի , նոյնպէս Անձեւայեոյ Մէջ գիւղի վրայ յարձակելով՝ Ալէ ճապէի հար իւր զինեալ Բիւրգերը 1300էն աւելի

ոչխար և 300էն աւելի կով ու եղ կը տանին : Գիւղին Հայ Միւշեր վրայ հրացան արձկած առնինին գնդակը Թուրք Շահնային (սլաւարի միւլթէ-գիւմ) հանդիպելով կ'սպաննեն : Այս Բիւրգեր յետոյ վերադառնալով յարձակելով մնացած գուարն ալ կը տանին և գիւղը կը պարպեն : Սեպտ. 15ին Կաղանց և Գարման գիւղերու գուարն ալ Բիւրգեր կը տանին , և Յարութիւնը Հայոց ջաղապետին ըստը յորենները կը յախճաղուին . . . :

Ահա այս օրինակ հարստահարութիւնը տեղի կունենան Հայոց վրայ : Այն Բրտերն որք տէրութեան բանակին ծառայելու համար Հէնրի Մարթինի և Շապուրի հրացաններ ստացան , այսօր անդէն և խաղաղասէր Հայոց վրայ կը դուրսանան զանաք : Թէ և շատ բաներ կան զըրելիք , բայց զանց կ'առնուիք և չեմք ուղեր Կ. Պոլսեցի վաւերի սըրտեր վերաւորել . . . :

Փոփոխութիւնն ալ գեռ անդործ են , և կը գրեն եղեր Բ. Գրան թէ տոտ մնալն այլ ևս աւելորդ է , իւր թէ ցարդ իսկ այս կերպով մնալին աւելորդ էր , կամ թէ Կարնոյ հըրեւալակը երկիր եղած լինէր , ուստի և բնաւ նորանոր կարգադրութեանց և բարենորոգմանց գործողութեան հարկ չէինար :

Գեր. վաճան փորդապետ Յրանսերէն մէկ տեղեկագիր ևս տուաւ Անդղիական ընդհանուր հիւպատոսին , յորում կը նշանակուին Հայոց հարստահարութեանց ո՞ր տանէն ի վեր և ի՞նչ կերպով սկսուիլը և շարունակուիլը , թէ Հայք յանուն արքունի տրոյք քանի՞ պատիւիլ տուրք կը վճարեն : Թէ երեւոյն տարիէ ի վեր ինչու լեւնալեւակ Հայերը նըուաղելու և փճանալու վրայ են , թէ Հայաստանի մէջ ո՞ր տեսակ հաշիւներ կ'սպաննուին , ո՞ր տեղի աղջիկներ կը լլուլին և որ տեղիները կ'իսպառնան , թէ ինչու Հայք անդէն են , թէ Բ. Դանէն քանի՞ անգամ ֆոփոխուներ և ֆոփոխներ ապարդիւն կերպով ի Հայաստան եկան ու դացին . . . :

Թէ ինչու Ներսէս Պատրիարքը Պերլինի վեհաժողովին գիւմեց և 61 ըստը յօդուածը ցարդ ի՞նչ արդիւնք յառաջ բերած է . . . :

Կարնոյ ընդարձակ քարուկիր ուսումնարանի շինութիւնը լրանալու վրայ է . . . : սոյն հսկայ շէնքը Կարնոյ քաղաքին պարծանք ու պատիւ բերելու բաւական է : Այլին ուրեմն այն Կարնոյի աշիւ աղդայինք որք աղքատիւրաբար կը գործեն , առանց բարձր Հայոց այն միւս կարող քաղաքայն նման մաւրացիանութեան գիւմելու :

ՀԱՅԿ
1879 Սեպտ. 29
Կարնի

22 Սեպտ. 1879 Նրդնկո

. . . Խաղաղարար Տէր , Ազգանուէր Մասեացի մէջ Նիւիկ Ապահովեալ Նիւտմոնի հրատարակուած յօդուածներուն ի պատասխանի՝ հանրաժանօթ Բարթոլ Սուրի ստորագրութեամբ Հայրենիք լրագրոյ մէջ յօդուած մը կարգացի , յօդուած մը՝ որ որչափ տառնայնաբար ստուգուին կը պարունակէր :

Արդարեւ պատիւ կը համարէին ինձ պաշտօնի մի անպատկառ հեղինակի որ տալով ինձ հարկէն երբեք կարեւորութիւն չտալ և ոչ իսկ զայն հերքելու եղել , եթէ աւելի պարզ մը համարած չլինէր պաշտօնի բաղաւաճելու և թափառաւոր չլինէր անձանց որոգայթներէն զոգուցընէր մեր գաւառապետի սիրելի աղագիւններն , որոնք շատ անդամ պարգաւմութեամբ մեծ ապշ ու վախուած են :

Սուրբ թող ներութիւնն այս վերջին հաւաք մի համառօտ տեսութիւն ևս ընել Բ. Սուրի և իւր յօդուածին վրայ :

Պ. Բ. Սուր , կ'ասէք թէ ձեր Նիւիկա մասն օրն ուրախ լլալով՝ չոր ֆատուէտայի մը պատուրի բան չբերուեցաւ , իսկ յօդուած , ո՞րչափ ապուշէք եղեր որ շատ մը մոռցաք թէ ձեր Նիւիկա դատարան Պատկական տունի ութօրէից միջոցին ունեցած է , և թէ Լուսաւորչա կան Հայք մինչև Համբարձման օրն պաշտպանին , ի՞նչ , կը կարծէիք որ Նիւիկային Ձեր և Ձեր Սրբազնացեալին արժանիքը գնահատելու միջոցին կարենար մտնալ այն օրն՝ յորում զձեզ խիստ մօտէն ճանչնալու անհաղթելի ռեւելցաւ :

Ձարմանայի է տեսնել թէ ձեր մի ստալ ծածկելու աշխատած միջոցին պայտի մի վատութիւն ևս կը յաւելուէր որ բոլորովին մեղ կարծեցնէր կտայ թէ Բ. Սուր իւր նախկին ստալիստելու ճարտարութիւնը կորուսած է խաղաւ , վասն զի կը գրէք թէ « մենք մեծածախս կուշած էինք այն սեղանը , զոր Արապիկերցի պանդուխտ աղագայինք պատրաստած լլալով՝ առաւտեան մատակարարին յանձնած էին , որպէս զի Նորին Սրբազնութիւնը ի ճանապարհին ձալէ : Լալ , աղանք ընթերցող , մեծածախս սեղան մը « հէյալէյ » մը մէջ կրնայ ամբողջուիլ : « մըլդաղ թօրպաւ կրիւտ » ի շնորհ Բ. Սուրի , թէ և բոլորովին անհիմն է մեծածախս սեղանի մը պատրաստութիւնն ալ , զոր Արապիկերցի աղագայինք վերադրելու օգտած էր , յաւաքով թէ այդ կերպով Արապիկերցի պատուարժան աղագայինք հաճոյք մը պատճառած պիտի լինի , չկարծելով երբեք թէ այդպիսի ճարտարական ստուգութիւնք անոնց վեհաճանութեան և իրաւախօսութեան տարած մ'ընել են . ինչպէս որ երբ այս տղերքն կարգացին՝ արդար զայրոյթ մը զգացին իւր գէմ , խոտովանելով հըրապարակաւ թէ բոլորովին սուտ է և իւրենց կողմանէ պաշտօնի մի սեղան երբեք ներկայացուած , չէր , կ'երեի թէ Պ. Սուրհաճի , այս մասին լաւ դատ չէր կըրցած կամ չէր ուզած առնել Ձեր Սրբազնային , վասն զի ինքն անձամբ իւր վերադարձին Մեծ. Դանիկեանց տունը երթալով տեղի ունեցած հրատարակութեան համար ներդրութիւն խնդրեց :

Կո յանձնարարէիք մեղ ցոյց տալ թէ վարդապետի հանդէս Ներկայի մի եկեղեցւոյ մէջ տեղի պիտի ունենար , և կը յաւելուէք թէ Թաղ. խորհուրդներն և թաղեցիք արդէն համաձայնած են որ հանդիսաւոր օրերը բոլոր եկեղեցիներն զոյգելով միայն մի եկեղեցի բաց մնայ . ճշմարիտ է թէ Ներկայի մէջ այդպիսի մի դրութիւն կայ : բայց , Պ. Ձերքէյ-Նալիք , կրնա՞ք ապացուցանել թէ վարդապետի հանդիսի արարողութիւնը Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ պիտի կատարուէր , թէ պիտի զինանք մեղ հետ խոտովանել որ չըման Ս. Նիւսի եկեղեցւոյն էր , և մեր այս տալիս գրածներն լոկ ճշմարիտ իրողութիւններ էին :

Իսկ պատարագչի շապիկն առթիւ ըրած զիտողութիւններդ գողցես ձեր ըզգացմանց համապատկերն կը ներկայէ մեղ (կը հասկնա՞ք ալ) , վասն զի Նիւիկային գիտէ թէ մի և նոյն շապիկը փախկանեցալ որդաղացեալէր աւելի պարկեշտ և ճաշակ տէր եկեղեցականներ կը հաղնին , մանաւանդ թէ լաւ զիտնալու էր որ Ներկայի եկեղեցիներու սպաններն և զգեստներն իրենց ճախութեամբ և մոյելելութեամբ կրնան Ձեզ նման շատ մ'անձանց արժէքն կըրուել քանի մ'անդամ :

Սրբազնիդ ժամուցի խնդրոյն դալով՝ կ'ասէք թէ « Նորին Սրբազնութեան մատակարարին առած տեղեկութեան նայելով 7 1/4 Օսմ. ոսկի և 25 արծաթ մէճիւտ գոյացած է » . Գարմանայի չէ՞ տեսնել ձեր ետտանի կազմելն , վասն զի ես անձամբ ներկայ գտնուեցայ գիտնալու համար թէ քանի՞ զըզ գոյացած է , երբ Արթ. Տէր Նիւիկէլ հայրն թաղախ ի ձեռն ժողովրդոց շըմագայեցին վերջը հաւաքածն կը համար , որ յետոյ յանձնուեցաւ Արթ. Տէր Յակոբ հօր , և որոյ գումարն էր 7 1/4 մէճիւտ և 25 գահէ կան սղինձ , է՛հ , ի՞նչ ճարտար վերա-

ծուծ , մէճիւտ ոսկի , սղինձն մէճիւտի դարձնել :

Ի՞նչ հարկ կայ երկարաբանել , Պ. Ձերքէյ , քանի որ ընթերցողն տոնցմով կրնայ Ձեր յօդուածին միւս մասերն ալ մտախորհել . ուրախ եմ որ Արապիկերցի աղագայինք ևս ձեր արժանիքը կըրուած ըլլալով՝ իրաւամբ մերժեցին զձեզ վարձարանաց սեմերէն ներս մտնելու . նաեւ խիստ զօհ եմք , երբ կը տեսնեմք թէ զուք ուր որ ալ երթաք , երկար առտեն չէք կրնար ձեր թաղան նպատակներն սքողել և չխայտառակուիլ , ինչպէս ի Քարբեղ , ի Կարնի , ի Կ. Պոլսի Ալի փաշա խանի մի սեմերէն մէջ . . . :

Միայն աւելորդ չեմ համարիր զի տեղ տալ թէ ի՞նչ արժանիք ունի նաեւ այն անձը՝ որ ձեզ նման մէկը կըրաւ կան նուիրական պաշտօնին բարձրացնելու կը ձգնի , և ի՞նչ պիտի լինի այն դաւառին վիճակն , երբ Բ. Սուրի նմաններ իրեն հովիւ և առաջնորդ կ'ունենայ :

Ազնիւ Մասիս , այլ ևս կը վերջացընեմք խոստ մեր պաշար : քանի որ մեր գէմ ունիմք Բ. Սուր մը , որ իւր անբարեկամութեամբ , վատ ապերախութեամբ և հաղիւտակութեամբ ևայն ևայլ՝ արդէն մարդ ըստած բանական էակն շնորհէ խաղաւ զրկուած է , և կը վաւերաբար տեսնուի ի մեծ ցաւ Բ. Սուրի և Նիւիկի թէ՛ Նիւիկայի ժողովուրդը չընորհիւ իւր մեղուածն Ապահովելին իրաւ կան յառաջադիւթիւններ ընել սկսած է . Ս. Ներսէսեան զինքնթիւ վարձարանին ամսոյ 30ին կը բացուի , միայն երկամեայ աշխատութեամբ (կարգն է հարցնել Նիւիկ Ապահովելին թէ ի՞նչ էր Կան Արապիկերցի Հայ ժողովրդեան տուած առատ նուէրներն երեւոյթական զիւրեր թիկի համար) . Ազգ. զերեպանտան չիւնութիւնն աւարտած է , որ մեծ պատիւ կը բերէ Նիւիկային , Բնիկական վարձարանը մեծ յառաջադիւթիւն ցոյց կուտայ . քաղաքի մէջ Ազգ. Կեղ. Աւստմարան մը կը հաստատուի . փառաւոր առաջնորդարան մը , Թատրոն մը և ուրիշ գեղեցիկ գոյաց մը կը լինուին . մեծ փութով և եռանդեամբ . ահա յաւաքական քայլեր , աղագոյտ գործեր , որոց համար Նիւիկային զոհած գումարը 1300 ոսկիէն աւելի է , և որք ժամանակ չեն թողուր Նիւիկայի երկատար դաւեան՝ Բ. Սուրի նման վատաբանաց հետ պրաղուել և Նիւիկ Ապահովելոյ որմէքը աւելի ջինջ ու պայծառ երեցնելու : Հայ ժողովրդեան , նորա փառապետական սին խորհուրդներն ու գործերն հրապարակելով :

Կը խնդրեմ . . . Տէր , որ ի սէր ճշմարտութեան բարեհաճեք այն յօդուածը պատուական Մասիսի մի անկիւնը զետեղել , ընդունելով կանխաւ իմ շնորհակալեաց հաւատարմութիւն :

Մ. Ձ. Թորոնտոնց

ԴԸԶ ԳՈՒԼԱՍԻ

ԳՈՐԾԱՐԱՆ
ԵՆԻՔԷԷ ԺԻՒԽՈՒԹԷ
Ձիւք Պաղար Սալման
Համալ փողոց թիւ 2
և մեծ մթերանոց ի նոյն փողոց թիւ 4

Այն գործարանին տնօրէնութիւնը , որ երկար առտեն ի վեր ծրարախաղաւ կ'ըզաղի , մեծ քանակութեամբ ԵՆԻՔԷԷ , Տրամուսի և Պաֆրայի ծխախոտ պատրաստած է : Մեր մթերանոցը պատուելու ուղով անձինք , ինչպէս նաեւ ծրարաւ փաճաւը կրնան ապահով ըլլալ որ Այստուլէն ուղղակի բերուած մեր ծխախոտներուն հետ իրարմիկ յարմարութիւն և թէ՛ զինքնէն շատ գոհ պիտի ըլլան :

Մեր գործարանէն ելած ծխախոտները մայրաքաղաքիս ամեն վաճառատները կը գտնուին : Մեր մթերանոցը մասնաւոր յանձնարարութիւններ ալ կ'ընդունուի , ինչպէս նաեւ թղթակցութիւն Երուսղոյ և օտար պիւստներու հետ խիստ չափաւոր գիններով :

ՄԵՒԷԷ ԱՐԵՎԵԼ Ե ԲՆԵ

